

## **ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական ուղերձը Բուժաշխատողի օրվա առիթով**

Սիրելի բուժաշխատողներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ բուժաշխատողների օրվա կապակցությամբ:

Հիպոկրատի երդմանը հավատարիմ, անմնացորդ նվիրումի, բարեխիղճ վերաբերմունքի և մասնագիտական հմտությունների շնորհիվ դուք միշտ անհրաժեշտ օգնություն եք ցուցաբերել դժվար ու ոչ սովորական պայմաններում հայտնված մարդկանց փրկելու և առողջությունը վերականգնելու համար:

Սյունեցու հիշողությունից չեն ջնջվել արցախյան ազատամարտի տարիներին մեր քաղաքների ու գյուղերի պաշտպանության ժամանակ ամեն մի զինվորի ու քաղաքացու կյանքի փրկության համար ձեր ցուցաբերած մաքառումի հերոսական ջանքերը: Այսօր էլ դուք ամենայն պատասխանատվությամբ եք կատարում աստվածահաճո ձեր առաքելությունը:

Վստահ եմ, որ մարզի համայնքներում տարեցտարի արդիականացող մեր բուժհաստատությունները, մասնագիտական որակների և հմտությունների բարձրացմանն ուղղված տարբեր ծրագրերը նպաստելու են մեր բնակչության առողջ կենսակերպի ապահովմանը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով բուժաշխատողի օրվա կապակցությամբ, մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, բարեկեցություն ու երջանկություն:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**



**Վ. Հակոբյան**

21 հունիսի 2014թ.